Հիսուսի հետևորդները

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Նրանց մասին

ԱՆՈՒՆՆԵՐԸ . Լյուսի, 7 տարեկան, Վիվի, 9 տարեկան և Զաք, 9 տարեկան

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ . Հարթֆորշիր (Անգլիա)

ԼԵԶՈՒՆ. անգլերեն

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ. Լինել լավ ընկեր (Լյուսիա), անգիր սովորել հավատո հանգանակները (Վիվի) և օգնել ուրիշ երեխաներին զբաղվել սպորտով (Զաք)

ԸՆՏԱՆԻՔԸ . Լյուսիան և Զաքը քույր ու եղբայր են, իսկ Վիվին՝ նրանց զարմիկը

Ինչպես են նրանք հետևում Հիսուսին

«Մեր ընտանիքներն ապրում են նույն ֆերմայում, որտեղ մեր տատիկն ու պապիկն են», - ասում է Լյուսիան: «Շատ գործ կա անելու, սակայն մենք լավ ենք զգում, երբ ծառայում ենք: Մենք գիտենք, որ Հիսուսն ուզում է, որ մենք ծառայենք»:

«Մենք օգնում ենք տատիկին հոգ տանել պոնիների մասին»,- ասում է Վիվին: «Մենք նրանց տանում ենք դաշտ՝ արածելու: Մենք մաքրում ենք նրանց փարախները, սանրում ենք մազերը, կերակրում և լցնում նրանց ջրի դույլերը: Մենք սիրում ենք օգնել տատիկին»:

Զաքը նույնպես հետևում է Հիսուսին ծառայության միջոցով: «Մեր մեծ պապը ձեռքի վիրահատություն էր տարել: Նա չէր կարողանում խնամել իր այգին: Իմ ընտանիքը, զարմիկներս, տատիկս ու պապիկս օգնեցին հնձել սիզամարգը և մաքրել մոլախոտերը: Մեծ պապիկը շատ երջանիկ էր»: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԼՅՈՒՍԻ ՍԵՍԼԵԼ ԴԻՈՆԻ

Ինչպե՞ս եք դուք հետևում Հիսուսին

Հիսուսին հետևելու բազմաթիվ ճանապարհներ կան: Ինչպե՞ս եք դուք հետևում Նրան: Գրե՛ք և պատմե՛ք մեզ:

Նրանց նախընտրությունները

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. Զաքը սիրում է այն պատմությունը, երբ Հիսուսը քայլեց ջրի վրայով

ՎԱՅՐԸ . Լյուսիան և Վիվին սիրում են ժամանակ անցկացնել ձիերի հետ

ՄԻՐԳ ԿԱՄ ԲԱՆՋԱՐԵՂԵՆ . Մանգո (Լյուսիա), քաղցր կարտոֆիլ (Վիվի), բրոկոլի (Զաք)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ . Նկարչություն (Լյուսիա և Վիվի) և պատմություն (Զաք)

ԳՈՒՅՆԸ . Մանուշակագույն (Լյուսիա), փիրուզագույն (Վիվի) և դեղին (Զաք)